

արդէն հաճութեամբ եւ ուրախութեամբ լսեցինք մեր սիրելի որդի Յակոբ Ալիլոյ Յիսուսեանց կարգի կրօնաւորէն, որ Ամենաբարիստունայ թագաւորին Դեսպանին հետ յառաջագոյն այն տեղեր գացած էր, թէ Գուն զանց առած չես քու իշխանութեամբդ Հայերու եւ Եւրոպացի միսիոնարներու մէջ փոխադարձ սէր արծարծելու, որ գործին համար քեզի շատ պարտապան ենք եւ շերմաջերմ կը պաղատինք Աստուծոյ՝ որ ինչ որ սկսաւ ի քեզ, ի լրումն ածէ, եւ քու գլխոյդ վրայ իւր շնորհաց պարգեւները սիրով զեղու, եւ այս նպատակաւ ամենայն սիրով կը շնորհենք Եղբայրութեանդ Առաքելական Օրհնութիւն:

Տուեալ ի Հռոմ առ Ս. Պետրոսի, ընդ կնքաւ Չկնորսի, 15 Մարտ 1710, Մեր Քահանայապետութեան տասներորդ տարին: 7

Թէպէտ երկու նամակներն ալ իրենց նպատակէն վրիպած են, սակայն կաթողիկոսին առաջին նամակաբերն՝ Յովակիմ Արքեպ. Ջուղայեցի, իր նուիրակութեան պաշտօնը կատարելէն ետեւ՝ մնացած է Հռոմի մէջ եւ յարած է կաթողիկէ Եկեղեցւոյ: Ասկէ կը սկսի ծանօթանալ մեզի Յովակիմ Արքեպ., սակայն մահը խորհրդական մթութեան մը մէջ ծածկուած կը մնայ, զոր ժամանակը պիտի լուսաւորէ:

Յովակիմ Արքեպ. 1712, Յնր. 5 եւ Փետր. 7 թուակիր նամակներ ունի, պահուած